Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵՎ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

<u>ՀՀ համախմբված բյուջե</u>

Տարեց տարի Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը զուգընթաց բարելավվում են նաև ՀՀ համախմբված բյուջեի ցուցանիշների, որի մասին վկայում են ստորև բերված աղյուսակում ներկայացված 2004-2006 թվականների փաստացի, 2007 թվականի կանխատեղվող և 2008 թվականի նախագծվող ցուցանիշները (բյուջետային հին՝ ներկայումս կիրառվող ՊՖԿ-1986 դասակարգմամբ).

(մլրդ դրամով)

	2004թ	2005թ	2006թ	2007թ.	2008թ.
Եկամուտներ	366.7	449.5	533.4	613.1	774.9
Ծախսեր	396.5	492.2	567.9	681.5	877.5
Դեֆիցիտ	29.8	42.7	34.4	68.4	102.6

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի համախմբված բյուջեի (պետական և համայնքների բյուջեների համախմբում) ցուցանիշները (որից պետական բյուջեն՝ 2008 թվականից կիրառության մեջ դրվելիք բյուջետային նոր՝ ՊՖԿ-2001, իսկ համայնքների բյուջեները, որոնց նախատեսվում է նոր դասակարգման անցկացնել 2009 թվականից՝ ՊՖԿ-1986 դասակարգմամբ) կանխատեսվում են. եկամուտները՝ 766.9 մլրդ դրամի, ծախսերը՝ 843.0 մլրդ դրամի և դեֆիցիտը՝ 76.1 մլրդ դրամի չափով: Նշված ցուցանիշները գերազանցում են ՀՀ 2007 թվականի համախմբված բյուջեի նախապես կանխատեսվող (դասակարգման տեսանկյունից պետական բյուջեի գծով համադրելի) ցուցանիշները՝ եկամուտների գծով՝ 164.0 մլրդ դրամով կամ 27.2%-ով, ծախսերի գծով՝ 193.7 մլրդ դրամով կամ 29.8 %-ով և դեֆիցիտի գծով՝ 29.7 մլրդ դրամով կամ 63.4 %-ով:

2008 թվականի համար ծրագրավորվող ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ 2008 թվականի համախմբված բյուջեի եկամուտների հարաբերությունը կանխատեսվում է 21.8 % (2007 թականի համար կանխատեսվող 19.6 %-ի դիմաց), ծախսերինը՝ 23.9 % (2007 թականի համար կանխատեսվող 21.1 %-ի դիմաց), դեֆիցիտինը՝ 2.1% (2007 թականի համար կանխատեսվող 1.5 %-ի դիմաց):

Հարկ է նշել, որ ցուցանիշների նման աճը պայմանավորված է ոչ միայն պետական բյուջեի ցուցանիշների շարունակական բարելավման, այլև արտահայտում է համայնքների բյուջեների եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման կայուն միտումները և դրա շնորհիվ ծախսերի ծավալների ավելացումը: Համայնքների բյուջեների սեփական եկամուտների (առանց պետական բյուջեից ստացված պաշտոնական հատկացումների) փաստացի հավաքագրած ծավալների աճի դինամիկան ներկայացված է ստորևէ բերված աղյուսակում.

2004թ	2005թ	2006թ	2007թ	2008թ
15.9	17.4	23.5	24.3	25.4

<u>ՀՀ պետական բյուջե</u>

«Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2008 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 744.7 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 820.8 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 76.0 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի գումարը՝ 76.0 մլրդ դրամը, ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված համադրելի ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 23.6 մլրդ դրամ և 58.6 մլրդ դրամ ավելացումով: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2008 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի տոկոսային հարաբերությունը կանխատեսվում է 2.1%-ի չափով, 2007 թվականի համար ծրագրված և 2006 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 1.5%-ի և 0.6%-ի դիմաց: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման համար նախատեսվում է ներգրավել շուրջ 175.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 19 աղյուսակում):

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը նախորդ տարիներին կիրառվողից որոշակի փոփոխությունների է ենթարկվել, կապված ինչպես 2008 թվականից նոր բյուջետային դասակարգման անցման, այնպես է ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները 2008 թվականից պետական բյուջե հավաքագրելու և ծախսերը պետական բյուջեից կատարելու հետ, ստորև ներկայացվում է ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը՝ հին (մինչև 2008 թվականը կիրառվող) ՊՖԿ-1986 դասակարգմամբ ու

առանց ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի ցուցանիշների, և դրանց համեմատականը 2007 թվականի հաստատված և 2006 թվականի փաստացի համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի սեփական եկամուտների, դրանց հաշվին իրականացվող ծախսերի և հավելուրդի կամ դեֆիցիտի նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատականը :

մլրդ դրամով

	2006թ. փաստ	2007թ. հաստատված	2008թ. նախագիծ	2008թ-ը. 2006թ. նկատմամբ	2008թ-ը. 2007թ. նկատմամբ
1. Եկամուտներ	441.5	520.9	647.9	146.7%	124.3%
որից՝					
կապիտալի գործառնություններից եկամուտներ	16.0	19.8	8.0	50.0%	40.4%
2. Ծախսեր	481.2	589.4	740.0	153.8%	125.6%
որից՝					
ընթացիկ ծախսեր	356.6	432.0	533.0	149.5%	123.4%
կապիտալ ծախսեր	106.7	135.3	180.7	169.4%	133.6%
վարկավորում՝ հանած մարումը	17.9	22.1	26.3	231.7%	119.0%
3. Դեֆիցիտ (-)	-39.7	- 68.5	- 92.0	231.7%	134.3%
4. Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	39.7	68.5	92.0	231.7%	134.3%
որից՝					
ներքին աղբյուրներ	13.6	41.3	38.0	279.4%	92.0%
արտաքին աղբյուրներ	26.1	27.2	54.0	206.9%	198.5%
Բացի այդ՝ ՀՀ սոցիալական ապահովագրության բյուջե					
սեփական եկամուտներ	75.9	85.0	104.9	138.2%	123.4%
ծախսեր՝ սեփական եկամուտների հաշվին	71.5	85.0	115.3	161.3%	135.6%
հավելուրդ (+), դեֆիցիտ (-)	4.4	-	-10.4		